

Երեքշաբթի 09 Օգոստոս 2011

<http://www.aztagdaily.com/?p=23533>

Մայր էջ » ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՌՕՐԵԱՅԷՆ. «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՅՍՕՐ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԷՋ» ՆԻԻԹՈՎ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԷՋ



Հրաչ սրկ. Չիլինկիրեան

Չորեքշաբթի, 3 օգոստոս 2011-ին, դպրեվանքին մէջ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը, նուիրուած «Հայ եկեղեցին Եւրոպայի մէջ» նիւթին, որուն ներկայ գտնուեցան միաբան հայրեր եւ դպրեվանեցիներ:

Բացման խօսքը կատարեց դպրեվանքի տեսուչ՝ Նարեկ արք. Ալեկմեզեան, որ ամփոփ կէտերու մէջ ներկայացուց օրուան դասախօս՝ Հրաչ սրկ. Չիլինկիրեանը՝ Լոնտոնի Քեմպրիճ համալսարանէն: Սրբազանը ըսաւ.- «Այս դասախօսութիւնը անգամ մը եւս մեր ուշադրութիւնը կը սեւեռէ այն յստակ իրողութեան վրայ, որ հոգեւորական եւ աշխարհական դպրեվանեցիներ կը ծառայեն մէկ եւ ամբողջ հայ եկեղեցոյ: Տեղեակ ըլլալ Եւրոպայի մէջ հայ եկեղեցոյ իրավիճակին, մեզ՝ դպրեվանեցիներս՝ կը պարտաւորեցնէ խոր պատասխանատուութեամբ պատրաստուելու մեր ապագայի առաքելութեան»:

Հրաչ սարկաւագ իր դասախօսութիւնը սկսաւ յայտնելով. «Ինծի համար մեծ ուրախութիւն է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքին մէջ

գտնուիլ, ուր հայ եկեղեցւոյ սպասաւորները կը պատրաստուին»: Ապա, ան ներկայացուց Եւրոպայի հայ եկեղեցւոյ պատմական հոլովոյթն ու այսօրուան պատկերը, յատկապէս ծանրանալով Լոնտոնի Ս. Մարգիս եկեղեցւոյ վերջին տարուան հովուական ծրագիրներուն արձանագրած յաջողութիւններուն վրայ՝ իբրեւ գործնական արտայայտութիւն առաջնորդ, հովիւ եւ հօտ համագործակցութեան: Ան լուսարձակի տակ առաւ Եւրոպայի քրիստոնէութեան ներկայի ներքին եւ արտաքին խնդիրները, լուծումներ առաջարկեց եւ հրաւիրեց դպրեվանեցիները իրենց ուսումնառութիւնը ամբողջական նուիրումի վերածելու: Ան եզրակացուց. «Այսօրուան մեր մարտահրաւերը այն է, թէ ինչպէ՛ս պէտք է հայ մարդուն հոգեւոր սնունդ տանք եւ զայն հաղորդակից դարձնենք հայ եկեղեցւոյ արժէքներուն: Այս ճիգին բանալին հոգեւորականն է. ան կա՛մ կը կերտէ եւ կա՛մ կը քանդէ իր ծառայած եկեղեցին»:

Երեկոյի փակման խօսքը կատարեց Կորին արք. Պապեան, որ նախ շնորհաւորեց Արամ Ա. կաթողիկոսի կողմէ նոր նշանակուած դպրեվանքի տեսուչ սրբազանն ու տեսչութիւնը՝ անոնց յաջողութիւն եւ նորանոր նուաճումներ մաղթելով դպրեվանքի նուիրական յարկին մէջ: Ապա, իր շնորհակալութիւնը յայտնեց օրուան դասախօսին եւ ընդգծեց անոր հաւատացեալի ու ընկերաբանի նուիրումը հայ եկեղեցւոյ: Վերջապէս, սրբազանը յորդորեց դպրեվանեցիները անխախտ հաւատքով եւ տոկուն կամքով գօտեպնդուելու, որպէսզի կարենան մօտ ապագային իրենց ծառայութիւնը մատուցել հայ եկեղեցւոյ:

